

պետութեան, մեր Ս. Յակոբայ եկեղեցւոյն մէջ կը մնար. զիտենք նաեւ թէ Տեառնեղբայրը նահատակուած է Տաճարին մօտ տեղ մը. վասն զի այն ժամանակի քրիստոնէական կրօնի ընդզիմադիրները ուզեցին փակել բերանը Քրիստոսի այդ անձնուէր Առաքելոյն, բայց ան իր ձայնը լսելի կ'ընէր Տաճարին աշտարակէն, և ճշմարտութեան հակառակորդները կատարութեան նուպայէ մը բռնուած՝ աշտարակէն վար գլորեցին Տեառնեղբայրը. և երբ ան կ'աղօթէր իր թշնամեաց համար, անոնցմէ մին տփանով զարկաւ Սուրբի գլխին, ու ան նահատակուեցաւ ի սէր Քրիստոսի: Եւսերիոս՝ Հիգեսիպոսէն եւ Կղեմէսէն առնելով, մանրամասն կը պատմէ անոր նահատակութեան պարագաները ու կը գրէ. «այսպէս վկայեաց նա, եւ թաղեցին զնա անդէն ի տեղւոջն. եւ մինչեւ ցայսօր ժամանակի շիրիմ նորա կայ առ կողմն տաճարին» (Եկեղեց. պատմ. Դպր. Բ., էջ 125-130): Այս վկայութիւնը բացորոշ կերպով կը հաստատէ տիրող աւանդութիւնը Ս. Տեառնեղբոր գերեզմանին նկատմամբ: Դ. գարուն, Կիւրեղ երուսաղէմացիին օրով, Տեառնեղբոր նշխարները գտնուած և Սիոն փոխադրուած են, մեր այժմու Ս. Յակոբայ եկեղեցւոյն տեղը, ինչպէս կը վկայեն աւանդութիւնք և վկայաբանութիւնք: Բայց ամէնէն որոշ վկայութիւնը կու տայ Շարթրը քաղաքին (Փարիզի մօտ) մատենադարանին մէջ գտնուած եւ յունարէնէ լատիներէն թարգմանուած Ժ. գարու ձեռագիր մը, զոր Պոլլանտեանք հրատարակած են 1889ին (Revue Biblique, 1919. էջ 480-499): Այդ ձեռագրին համեմատ Դ. գարուն Ս. Տեառնեղբոր գերեզմանին վրայ կը շինուի վկայարան մը և նշխարներէն մաս մը կը փոխադրուի այդ նորակերտ վկայարանը:

Նոյն թուականին, յայտնի է թէ քրիստոնէական եկեղեցւոյ մէջ տակաւին մուտ գործած չէր խորականութեան ոգին. բոլոր քրիստոնեաները, «մի հօտ եւ մի հոյիւ», առ հասարակ ջերմեռանդութեամբ կը յաճախէին տնօրինական Ս. Տեղեր. պաշտամունքներ կը կատարէին միասնաբար: Որոշ թուականէ մը յետոյ է որ՝ Երուսաղէմի մէջ, իւրաքանչիւր ժողովուրդ կ'ունենայ իրեն սեպհական ուխտատեղիները և վանքերը: Մեր ձեռքը գտնուած յիշատակարաններ կը վկայեն թէ է. գարուն, Յովսափատի Ս. Տեառնեղբոր վանքը Հայոց սեպհականութիւնն էր: Անաստաս հայ վարդապետի կազմած ցանկին մէջ, գուցէ Պա-